Դանիել Վարուժան

Առաջին մեղքը

Ձորերուն մեջ, սարերուն վրա կ'արածեր
Ան ամեն օր ուլն իր կապույտ աչերով.
Ոտքերը մերկ էին և միշտ ալ վըստահ
Մեն մի քայլին՝ շուշան վրա կոխելու:
Ճերմակ կրծքին մերկության վրա վիժանուտ
Ոսկի հերքեն կը ծորեին ծոթրիններ.
Ո՛չ մըրտենին և հասմիկները գըլխուն
Կը թոշնեին, ո՛չ ալ վարդերն այտերուն.
Ան միշտ կ'երգեր, ու երգն իր
Կը ծիծաղե՛ր սըրտին մեջ,
Իր ըզգեստիկը կապույտ
Երկընքի մեկ ջինջ կըտորեն էր ձևված.
Եվ հովվական իր ցուպն էր օձ մը բրածո՝
Քարացա՛ծ օձ՝ որ իր մաքուր ձեռքին մեջ
Դեղձիի ճյուղ մը եղավ:

Երբ վըտակին եզերքեն
Ան կը քըշեր ուլն իր կապույտ աչքերով՝
Ծառերուն մեջ՝ գաղտագողի՝ լուսնկան
Իր ետևեն կը քալեր.
Եվ լուսնկան տարփատենչ բիբն էր գուցե
Եհովային, կույսերու հի՛ն Սիրահար:

Բայց իրիկուն մ'ան հովտեն ձայն մը լըսեց՝
Որ զինքը, վա՛ռն, աղբյուրին քով կը կանչեր.
Երգ մ'էր կարծես, այնքա՜ն աղվոր և դյութիչ՝
Որուն իր ուլը ճերմակ
Վիզը տընկած, խոտը բերանն, ունկընդրեց.
Նոր երգ մ'էր ան՝ որ կ'ըսեր.
“Ճերմա՜կ աղջիկ, ճերմա՜կ աղջիկ, վա՛ր եկուր,
Եվ աղբյուրին քով ուլդ ինծի զոհ ըրե:
Թզենիին շուքին տակ,
Ճերմա՛կ աղջիկ, ճերմակ ուլդ ինձ զոհ ըրե:
Այս լեռներուն ես Ոգին եմ լիազոր.
Իմ շունչիս տակ՝ թե ուզեմ՝
Գետեն արծա՛թ կը հոսեն
Եվ հեղեղները՝ ոսկի.
Հասած տեղն իմ համբույրիս
Կ'անցնի սարսուռն՝ որ բաղձանքն է ծնունդին.
Իմ գըրկիս մեջ շուշաններ վա՛րդ կը դառնան,
Եվ կույսերն ալ՝ թագուհի:
Ես քու զոհիդ արյունեն
Դաշտերն ամբողջ ծաղիկներով կը լեցնեմ,
Եվ ուլիդ տեղ թիթեռնիկներ կ'արածես.
Ճերմա՜կ աղջիկ, ճերմա՜կ աղջիկ, վա՛ր եկուր”:
Ան լսեց այս ձայնը, երկա՜ր ու երկա՜ր,
Որ կարծես իր արյունին մեջ կը խոսեր.
Լըսեց ու, լուռ, աստղերուն տակ հառաչեց:
Հետո դյութված՝ ցուպն առավ
Ու քըշեց ուլը ճերմակ՝
Բըլուրեն վար՝ դեպի հովիտն հեշտաբույր:
Հո՛ս է աղբյուրն, հո՛ս թզենին, և կը զգա՞ս
Արու Ոգին՝ որ ծոթրինի և թյումի
Ըզգըլխիչ հոծ բույրերով
Գըրկեր է քեզ: Զոհդ ըրե՛:
Ջինջ ու ողորկ քարերուն վրա աղբյուրին՝

Ծունկին վերև ան պառկեցուց ուլն՝ որուն
Փոքրիկ եղջյուրն ավազին մեջ խրրեցավ:
Ո՛հ, ի՛նչ արբշիռ էր պահն ու որքա՜ն անույշ.
Ան կը հավտար թե զոհելեն վերջը դեռ
Պիտի ուլն իր ողջ մընա,
Պիտի մարգին մեջ պապաչե և ոստնու:
Ան՝ մահն ի՛նչ էր՝ կ'անգիտանար, ու երգե՜ց.
Երգեց բնության ներշնչման տակ մեկն այն մեծ
Հաճույքներեն՝ զոր կու տա
Ջոհագործումը անձին.
Երգեց գարունն հասակին,
Դաշնակույթունն իր էության, և առանց
Ուլին կապույտ աչքերուն
Աղիողորմ նայիլն իրեն՝ տեսնելու,
Դրավ դանակն անբիծ վըզին, և արբշիռ,
Երգը շուրթին՝ զայն հեշտանքո՛վ մը զոհեց.
Ծունկին վըրա այն մոլորիչ Ոգիին՝
Ճերմակ աղջիկն իր ճերմակ ուլը զոհե՜ց:

Բայց իր զոհեն նոր ծաղիկներ չըբուսան,
Եվ ինք չեղավ թիթեռներու հովվուհի.
Պըղտորեցավ աղբյուրն ուլին արյունեն՝
Ուր ջուրին հետ պիտի ան ալ չըկըրնա՛ր
Խըմել աստղերը ցոլացիկ երկընքին.
Խոտերուն մեջ ցուպն հագավ
Իր նախկին բնույթը օձի.
Լուսինն իջավ լեռնեն վար,
Եվ ինք մութին մեջ, սարսռուն,
Բոպիկ ոտքով մեռա՜ծ ուլին քով կանգնած՝
Լացա՜վ, լացա՜վ, և արյունվա ձեռքերով
Իր թաց աչքերը շըփեց,
Մինչ գըլխուն վրա կը թոշնեին հասմիկներն,
Հրապուրված կույսն իր անուշ Մեղքը լացավ: